ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 մարտ 2021 թվականի N 133-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐԻ 2-ՐԴ ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ՋՈԿԱՏԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՊԵՏ ԳԵՈՐԳԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության վարչապետի 15.01.2021թ.-ի N 23-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի 2021թ.-ի մարտի 26-ին Տաթև համայնքում կայացած նիստի արձանագրության քաղվածքի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի 2-րդ սահմանապահ ջոկատի նյութատեխնիկական ապահովության բաժանմունքի պետի 2021թ. մարտի 18-ի դիմումը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N1 հավելվածի N1 աղյուսակի 01 բաժնի 01 խմբի 01 դասի 03՝ «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծախսային ծրագրով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի համար նախատեսված ծախսերի «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով սահմանված ֆոնդից 1.081.000 (մեկ միլիոն ութսուն մեկ հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով գումար հատկացնել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի 2-րդ սահմանապահ ջոկատի նյութատեխնիկական ապահովության բաժանմունքի պետ, փոխգնդապետ Գեորգի Կարապետյանին (ն/ք 006370175)՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի 2-րդ սահմանապահ ջոկատի տեղակայման վայրերում 2020 թվականի դեկտեմբեր, 2021 թվականի հունվար-փետրվար ամիսների օգտագործված էլեկտրական էներգիայի պարտքերը փոխհատուցելու համար:

2. Գ.Կարապետյանին՝ սահմանված ընթացակարգերի պահպանման նպատակով օգտագործված էլեկտրական էներգիայի կուտակված պարտքերի վճարումներն իրականացնելուց հետո եռօրյա ժամկետում Սյունիքի մարզպետարան ներկայացնել վճարման անդորրագրերը:

29.03.2021

X

ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN MELIKSET 4108600096

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Մ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2021թ. մարտի 29
ք. Կապան